ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՐԳԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայ ժողովրդի դարավոր պայքարը օտար բռնակալների դեմ ծնել է բանաստեղծական ստեղծագործություններ,ասքեր, վիպական երգեր, որոնց մեջ արտացոլվել են այդ պայքարի հերոսական էջերը: Ժողովրդական այդ ստեղծագործությունների մեջ առանձին շահեկանությամբ աչքի են ընկնում ռազմի երգերը: Որոնցից առաջին նմուշներից են «Լևոնի երգը», «Տաղ քաջ Լիպարտին» և այլն:

«Լևոնի երգի» հիմքում ընկած է Կիլիկյան Հայաստանի Լևոն արքայազնի պատմությունը/1266թ./: Պատմական հենքի վրա են ծնված նաև Լիպարիտ զորավարին նվիրված բանահյուսական բազում ստեղծագործություններ, որոնց մեջ հատկապես ուշագրավ է «Տաղ քաջ Լիպարտին» երգը: Այստեղ քնարական անմիջականությամբ գովերգվում են 1370թ. Տարոնի թուրք ամիրապետի զորքերի դեմ մղված կռիվներում հերոսաբար ընկած մեծանուն զորավարի արժանիքները:

Առանձին շարք են կազմում ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների շրջանում 18-19-րդ դդ. հորինված ռազմի երգերը, որոնց մեջ գեղարվեստական արժանիքներով աչքի են ընկնում «Լոռվա Մելիքի երգը», «Հորդոր», «Գովեստ Արշակ Տեր-Ղուկասյանի» երգը և այլն: Սրանց մեջ փառաբանվում են կովկասյան զորաբանակի հրամանատար Մելիքյանը, մեծանուն գեներալներ Տեր-Ղուկասյանը, Ղազարյանը և ուրիշներ:

Ռազմի երգերի մեջ, սակայն, նշանակալից բաժին են կազմում ազատագրական պայքարի երգերը, որոնք գլխավորապես հորինվել են Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում ծավալված ազատագրական պայքարի թոհուբոհի մեջ: Այս շրջանում հայ հասարակական մշակութային կյանքը ներթափանցված էր արևմտահայության ազատագրության գաղափարներով: Թուրք բռնակալության լուծը թոթափելու համար հայդուկային պայքարին էին զինվորագրվում բազմաթիվ գյուղացիներ, որոնք իրենց խաղաղ ստեղծարար աշխատանքը թողած, զենքը ձեռքին կենաց մահու կռվի մեջ էին մտնում ի սեր ազատության, սոցիալական արդարության:

Ազատագրական պայքարի երգերը արտացոլում են պատմական իրականությունը, պայքարի բոլոր ուղղությունները ու գլխավոր առանձնահատկությունները, որոնք հատկորոշվում են պայքարի համազգային, միասնական կենտրոնի բացակայությամբ, հայրենասիրական կազմակերպությունների, ան-

հատ կամավորների, կամավորական ջոկատների գործունեությամբ: Այդ երգերը պատմում են նաև հայդուկային երգերի, առանձին բնակավայրերի զինված ինքնապաշտպանության և սրանց ուղեկցող ծերբակալության աքսորի, արյունահեղությունների մասին: Ազատագրման պայքարի այդ երգերը հորինվել և կազմավորվել են գեղարվեստական և ոճական տարբեր հենքերի վրա: Ինչպես աշուղական, այնպես էլ գրական ծագում ունեցող ռազմի երգերը ընկալվել են իբրև ժողովրդական ստեղծագործություններ: Սա մեծապես պայմանավորված էր երգերի թեմատիկ ընդգրկումով, գաղափարներով, մոտիվներով լեզվաարտահայտչական միջոցներով և այլն: Ազատագրական պայքարի երգերը ծնունդ են առել հայ հասարակական կյանքի թելադրանքով, ուստի պատահական չէ այն գաղափարական, գեղարվեստական ընդհանրությունը, որը նշմարվում է ազատագրական նույն ոգորումների ճանապարհով ընթացող հույների, բուլղարների, հարավսլավացիների, հունգարների ժողովրդական բանահյուսության, հայդուկային և մեր ֆիդայական երգերի մեջ:

Ազատագրական պայքարի երգերը ըստ տեղի, ժամանակի կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

ա) զեյթունի երգեր, բ) հայրենասիրական կազմակերպություններին և կուսակցություններին նվիրված երգեր, գ) Մուշ-Սասունի և Վասպուրական – Շատախի երգեր, դ) հայդուկային (ֆիդայական) երգեր:

Զեյթունի երգերում իրենց արտացոլումն են գտել լեռնաբնակ հայության անզիջում, հերոսական պայքարը ընդդեմ թուրք զավթիչների: Այդ երգերը զեյթունցիների ինքնապաշտպանական կռիվների հարյուրամյա (1780-1895թթ.) պատմությունն է, որ շարադրել են աշուղ երգիչները: Զեյթունյան երգաշարի մեջ կիրառված է վիպական բանահյուսությանը հատուկ սկբունքը՝ օտար նվաճողների և ազատաբաղձ հայրենասեր ուժերի մեջ ծավալված պայքարը: Այստեղ վիպական բանահյուսության օրենքով հայրենիքի փրկությանը նվիրված հերոսները հաճախ գաղափարականացվում են՝ օժտվելով ժողովրդական մարտիկին բնորոշ լավագույն առաքինություններով: Այս է պատճառը, որ զեյթունյան շարքի երգերի մեջ գերիշխում են գովքի երգերը, որոնք կատարվել են թե խաղաղ ժամանակ և թե մարտի դաշտում: Այդ երգերը նվիրվել են մեծանուն հայրենասերներ Եղիա Նորաշխարյանին և Փանոս Չոլագյանին: Զեյթունյան երգաշարի առավել հայտնի միավորներից են «Երգ Զեյթունի» («Արև ելավ, Զեյթունցիներ») «Երգ Զեյթունցվոց» («Զեյթունցի ենք, ժայռի ծագ ենք»), «Զեյթունցիք» («Զեյթունցի ենք մենք քաջազունք») երգերը: Սրանք աչքի են ընկնում մարտաշունչ տրամադրությամբ, պայքարի վեհազնիվ կոչերով, որոնք ազդեցություն էին թողնում ժամանակակիցների վրա՝ նրանց մղելով նորանոր հերոսացումների:

Արևն ելավ, զեյթունցիներ,
Դեհ, ձի հեծնենք, առնենք զենքեր,
Դիմենք առաջ,
Ինչու, ինչու գլուխ ծռենք,

Բռնավորին մեր վիզ պարգած:

Հանդառակ իր կարճատև կյանքին՝ այդ կազմակերպությունը նշանակալից դեր կատարեց արևմտահայության ազատագրական պայքարի տարեգրության մեջ. «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությանն են նվիրված նշանավոր «Կարնոց շարժումը» երգը:

Ձայն հնչեց էրզրումի հայոց լեռներեն,
Թունդ թունդ եղան հայի սրտեր
գենք շայյունեն

Հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածները սպասում են էրզրումից (Կարինից) հնչելիք ազդանշանին: Երգի իմաստային կիզակետը իրև գլխավոր պատգամ հնչող միասնության կոչն ու ոգորումի հորդորն է:

Ուսումն ու լույսը ազատության, այդ թեզ են ընկեր,
Սուր, հրացան, նռանդ ռազմի պաշտպան անվներ:

Հայ հասարական, քաղաքական կյանքում կարևոր դեր է կատարել «հայ հեղափոխական դաշնակցությունը» կուսակցությունը: Ուստի պատահական չէ այն ջերմ վերաբերմունքը, որ հայ հասարակության շատ երևելի ներկայացուցիչներ իրենց ազգային քաղաքական ակնկալությունների իրագործումը կապած էին այդ որդեգրած սթափ, իրատես գործունեության հետ: Այդ ակնկալությունները և սպասումները իրենց բանաստեղծական դրսևորումն են գտել շատ երգերի մեջ: Ժողովրդական զանգվածները իրենց անկեղծ աջակցությունն ու զորակցությունն են հայտնում այդ կուսակցությանը և իրենց ճակատագիրը վստահում նրանց:

Մուշ-Սասունի, Վասպուրական-Շարախի երգերը հյուսվել են աշխարհագրաան համապատասխան տարածքներում: Այդ երգերը, բանաստեղծական վիպասքի հայտնի սկզբունքներով պատմում են Արևմտահայաստանի այդ տարածքներում հայ ժողովրդի վարած հերոսական պայքարը: Ազատագրական այդ պայքարը առաջ են տանում կամավորական ջոկատները կամ անձնազոհ անհատները: Մշո դաշտում ծավալված ազատագրական կռիվները իրենց քնաաան դրսևորումներն են գտել «Մուշ, ախ իմ հայրենիք», «Ես Կարապետն եմ մշեցի», «Ողբ», «Քամին եկավ երամ-երամ» սկզբնատողով երգերում: Ի տարբերություն Մուշի երգերի՝ Սասունի երգերը աչքի են ընկնում խրոխտ մարտականությամբ: Սասնո քաջերի սխրանքների մասին պատմող այդ երգերը կոչվել են շեր: «Շեր կապելու» կամ հորինելու մասին վաղագույն հիշողությունը գտնում ենք 7-րդ դարի պատմիչ Հովան եպիսկոպոս Մամիկոնյանի Տարոնի պատմության մեջ: Սասունում շեր են կապել մասնավորապես քաջությամբ աչքի ընկած հերոսների մասին: Այդ երգերում հախուռն անմիջականությամբ գովաբանվում են սասունցիների քաջագործություններն ու սխրանքները:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին տեղի ունեցած հայտնի դեպքերի արձագանքներն են լսվում այնպիսի նշանավոր երգերի մեջ, որպիսիք են Ազու

երգը», «Տալվորիկցի կտրիճ», «Սասունցոց զանգատը», «Սասունի պատերազմը», «Սասունցոց երգը», «Կտրիչ սասունցի», «Սասուն» երգերը: Սրանց մեջ ապրում է սասունցիների անպարտելի ոգին: Նույնիսկ ծայրասիճան դժվարին, անհուսալի պահերին սասունցիներն իրենց մեջ ուժ են գտնում գոտեպնդելու հայրենակիցներին(«Սասուն»).

Իսլամական զոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի,
Մի փոքրիկ բաջ Սասուն
Մեզ համար չէ նորութեուն,
Մեր պապերից սովորել ենք
Մեռիլ տղամարդի պես,
Զոր մեզ թողին հիշատակ:

Քիչ չէ նաև թիվն այն երգերի, որոնք հորինվել են Վասպուրականում և Շարախում 19-րդ դարի 80-90-ական թվականների հայտնի իրադարձությունների ազդեցության տակ: Այս շարքի հայտնի միավորներից են «Շարախու սարեր անուշ զուլան», «Վանեցոց երգ», «Խաբար տարեք հարին, մարին: «Կռվեցեք տղերք», «Խանասոր» երգերը: Ի տարբերություն նախորդ շարժի, այստեղ նկարագրվում է ոչ թե այս կամ այն զինյալ բախումը, այլ բախման ողբերգական հետևանքը: Երգերում անկեղծ հուզմունքով պատմվում է ժողովրդի նվիրյալ ֆիդայինների նահատակության տխուր մանրամասները, որոնք դառնում են առավել ներազդու, հատկապես կրկնակների մեջ: Հիշատակության արժանի է հատկապես «Կռվեցեք տղերք, կռվեցեք բաջ-բաջ» և «Խանասոր» երգերը: Առաջինը քայլերգային բնույթ ունեցող երգ է, ուր խրոխտ ձայնով հնչում է պայքարի կոչը: Այս ստեղծագործությունը վեհազնիվ հայի մի ճշմարիտ խոսք է, հույս՝ ազատ և անկախ Հայաստանի ապագայի նկատմամբ: Այս պայծառ հուսո իրականացման համար հայ կտրիճը չի խնայում իր կյանքը.

Կռվեցեք տղերք, կռվեցեք բաջ-բաջ
Անվեհեր կանգնած թշնամու առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիվ մահը...

«Խանասոր» երգում նկարագրվող անցուդարձը տեղի է ունեցել 1897թ. ամռանը: Հաղթանակը ֆիդայինների կողմն է: Թեպետ հայ կտրիճները լցված են անհուն վրեժխնդրությամբ, սակայն նրանց երբեք չի լքում մեր ազգին այնքան հատուկ վեհանձնությունն ու մեծահոգությունը:

Կարկուտ տեղաց Խանասորա դաշտումը,
Ֆիդայիններ, դաշնակցական, վրեժ առած հակումը:

Ազատագրական երգերի մեջ մեծ թիվ են կազմում բացառիկ հերոսությամբ աչքի ընկած առանձին ֆիդայիններին նվիրված երգերը: «Ֆիդայի» բառը, որ նշանակում է «անձնազոհ», «նվիրյալ», հայ իրականության մեջ է ներմուծվել բալկանյան ժողովուրդների ազատագրական բովով անցած պատմական փոր-

ծի հիման վրա: Այն համարժեքն է հայդուկ բառի: Ժողովրդական երգարան-ներում այդ երգերի լայն ընկալումը, դրանց հարատև լինելը մինչև մեր օրերը իրապես վկայում են ֆիդայական երգերի համազգային հնչեղության մասին: Բանաստեղծական կատարելությամբ աչքի չընկնող այդ ստեղծագործություն-ները իրական արժեք են ծեռք բերում երաժշտախոսքային և կատարողական միասնության մեջ միայն: Ֆիդայական երգերի կենցաղավարման մեջ առանձին նշանակություն է ունեցել երգի կատարողական, կիրառական կողմը, քանզի շատ հաճախ այդ կողմն է պայմանավորել երգի թողած ազդեցության չափն ու որակը:

Որն է եղել այդ երգերի նպատակը գոտեպնդել, բարձր պահել ժողո-վրդի ազգային արժանապատվությունը, դաստիարակել պայքարելու և իր անկախությունն ու ազատությունը սեփական ծեռքերով կռելու վճռականու-թյամբ:

Ֆիդայական երգերն ընդգծված պատմահայրենասիրական բնույթ ունեն: Այդ երգերը ծնվել են ռազմական իրադարձությունների բուռն ընթացքի ու թոհուբոհի մեջ: Ուստի պատահական չէ, որ դրանց մեջ արտացոլված է իրա-կանությունն իր բոլոր մանրամասներով: Մանրամասներ, որը ներկայացնում է ֆիդայու հերոսական կերպարը, որ մասամբ պատկերագծված է վիպասք, հայտնի սկզբունքների կիրառումով: Իրենց տեսակի մեջ եզակի հետաքրքրու-թյամբ են հատկորոշվում «Արաբոյի երգը», «Աղբյուր ջան», «Սերոբ փաշի հիշատակին», «Սոսեի երգը», «Գևորգ Չավուշի երգը», «Անդրանիկին», «Անդ-րանիկի երգը»: Այս երգերում բարձր ներշնչանքով գովերգվում են հերոսների սխրանքները, նրանց ներքին և արտաքին բարեմասնությունները, մարդկային առաքինությունները: Ժողովրդական գովասանքի մեջ գողտրիկ նմուշ է «Սերոբ Աղբյուր» երգը, ուր բանահյուսական տարբերակով բնութագրվում է սիրված հերոսի արժանիքները.

Իգիթ սիրտը քաջ Սերոբի Արևի պես
Նեմրութ սարում լույս կուտայ...

Աղբյուր Սերոբին նվիրված մեկ այլ երգ ոչ այն ինչ է, քան նրա մարտաշունչ կոչը իր ժողովրդին: Ոգի՜ ի բուռն պայքարի դուրս գալու անարգ թշնամու դեմ: Ստեղծագործության մեջ «թող գա» արտահայտությունը, երգը դարձնում է առավել կենդանի ու ներգործուն.

Ով որ քաջ է, ինչ կսպաս է,
Արդեն ժամանակն է, թող գայ,
Մահ, պատերազմի օրհաս է,
Ով որ անկախ քաջ է՝ թող գայ:

Վիպական հերոսներին վայել գծերով է օժտված Գևորգ Չաուշը: Ժողովրդի սիրելի ֆիդային գովերգում է աշուղական արվեստի ընդունված

օրենքով: Նա չափազանց գեղեցիկ է, քաջ, արդարամիտ, ազատագրության գործին անհուսորեն նվիրված.

Թուրքը լսավ անուշդ Չաուշ,
Դեմքդ սիրուն , լեզուդ անուշ,
Կյանքիդ մեջ հանգիստ չունեցար,
Սասուն է քո ապաստան,
Վրեժ է քո դատաստան:

Առանձին շարք են կազմում Հայ ժողովրդի մեծագույն հերոսներից մեկին՝ Անդրանիկին նվիրված երգերը: Սրանց մեջ մեծ խանդավառությամբ երգվում է Անդրանիկի ռազմավարական տաղանդը, հայրենասիրական խանդը: Նրա դյուցազնական կերպարը ներշնչանքի աղբյուր և օրինակ է եղել բազում ֆիդայիների, ժողովրդի ազատագրության գործին զինվորագրված հայ մարդկանց համար: Այս է պատճառը, որ նրա մասին հյուսված երգերը գլխավորապես գովքի երգեր են.

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ
Սուրբ անունդ պիտի հիշվի դարեդար
Հսկա լեռներ քեզ ապաստան, Անդրանիկ:

Ֆիդայական երգերում առկա են նաև նրանց մտերմության, համագործակցության մասին ակնարկող առանձին դրվագներ: Այսպիսին է օրինակ «Սերոբ Փաշայի երգը», ուր սրտալի անմիջականությամբ, Աղբյուր Սերոբի շուրթերով խոսվում է իր և Անդրանիկի հարաբերության, ընկերական հավատարմության մասին, այն անդրադարձն է Սերոբի ողբերգական վախճանի (1899թ. նոյեմբեր):

Գնդակ որոտաց նոյեմբեր ամսուն,
Պաշարված ենք մենք, իմ սիրուն Սոսե,
Վեր առ մոս ինձ, քաջություն հոս է,
Քո սիրած Սերոփին օրհնյալ օրն այս է:

Այս փոքրիկ ակնարկը ցույց է տալիս, որ ի տարբերություն նախորդ երգերի, ֆիդայական երգերի մեջ զետեղված են հայրենասիրական բարձր զգացմունքները և մտերմիկ շունչը, որոնք առավել հարազատ ու ընտանի են դարձնում այդ երգերը: Հենց այդ հատկությունների մեջ է ֆիդայական երգերի մոգող հմայքն ու անանց գեղեցկությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատուր Մնացականյան, Միջնադարյան ժողովրդական երգեր (Երևան 1956թ.)
2. «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» (Երևան 1989թ.)
3. «Ժողովրդային երգարան», հրատ. «Երևան» Բոստոն-Վաշինգտոն
4. Պատմություն Տարոնոյ աշխատությունը Աշոտ Աբրահամյանի (Երևան 1941թ.)